



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3406

281  

---

L-44

1884

18900

106-55

151

400 44. 151

ՍՐԲԱԶԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

281  
L-44  
ur

**ԼԵՒՈՆԻ ԺԳ.**

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՄԲ

**ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ**

**ԹՈՒՂԹ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ**

ԱՌ ՀԱՄՈՐԷՆ

ՊԱՏՐԻԱՐՔՈՒՆՍ ՆԱԽԱԳԱՀՍ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ

1006  
76862

Ո Ր Ք

ԵՆ Ի ՇՆՈՐՀՍ ԵՒ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅՆ

և ն



Թարգմանաբար 'ի կարգը Քուրանի  
Զ. Զ. Վ.



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՃԻՎԵԼԿԵԱՆԻ

1884

2010

# ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՑ

ՀԱՄՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՅ ՆԱԽԱԳԱՀԻՑ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՍՅ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՍՅ  
ԿԱԹՈՒՂԻԿԵՍՅ ԱՇԽԱՐՀԻ

ՈՐԲ

ԵՆ Ի ՇՆՈՐՀՍ ԵՒ Ի ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՒՈՅՆ ԵՆ

## ԼԵՒՈՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԺԳ.

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲԱՐԲ

### ՈՂՋՈՅՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Մարդկային ազգը՝ Բանասրկուին նախանձելովը զատուելէն ետքը Աստուծմէ, որն  
 որ զինքն ստեղծեւ և իրեն երկնային պարգեւներ առատաձեռներ էր, երկու զանազան  
 և հակառակ կողմ քաժնուեցաւ՝ որոց մին առաքինութեան և ճշմարտութեան պաշտ-  
 պան կը կենայ շարունակ, իսկ միւսը առաքինութեան և ճշմարտութեան դէմ եղող  
 բաներուն, Առաջինը՝ երկրիս վրայ Աստուծոյ թագաւորութիւնն է, այսինքն Յիսուսի  
 Քրիստոսի ճշմարտ եկեղեցին, որուն սրտանց և փրկաւէտ կերպով պատկանիլ ուզողը՝  
 հարկ է որ յամենայն մտայ և բոլոր կամօք ծառայէ Աստուծոյ և իւր Միաժին Որդ-  
 ւոյն, երկրորդը՝ Ասատնային թագաւորութիւնն է, որուն իշխանութեանն ու զօրու-  
 թեանը ներքեւ կը դանուին անոնք ամենքը՝ որոնք իրենց պարագլխոյն և մեր նախանձելովը  
 թագաւոր չոր ետքը թշուառ օրինակներուն հետեւելով, չեն ուզեր հնազանդիլ  
 Աստուածային և յաւիտենական օրինաց և շատ բաներ զԱստուծմէ անտրոյթ լինելով և  
 շատ մեղքացարձակ ընդդէմ Աստուծոյ կը դորձեն, Այս կրկին թագաւորութիւն-  
 էրը ըստ նմանութեան երկուց քաղաքաց որոնք մէկը մէկու հակառակ օրէնքներով և  
 խորհուրդներով կը կառավարուին՝ սրամտութեամբ տեսաւ և նկարագրեց սուրբն Օգոս-  
 տինոս, և երկուքին ալ կազմարար սկիզբը հանճարեղ կարճառօտութեամբ երեւան հա-  
 նեց սա խօսքերով, « Իբն սեբ կանխեց երկու քաղաքներ, այսինքն անյնատրոյթիանը միջեւ ցարհա-  
 ճարածն Աստուծոյ շինեց երկուսը քաղաք, իսկ Աստուծոյ անտրոյթիանը միջեւ ցարհաճարածն անյն՝ շե-  
 ճեց երկուսը » (1) : Այս երկու քաղաքները ամեն դարերու մէջ զանազան և տեսակ  
 տեսակ զէնքերով և ուղղմագիտութեամբ մէկը մէկու դէմ պատերազմեցան՝ թէպէտ ոչ  
 միշտ նոյն եռանդով և սաստիկութեամբ : իսկ մեր ժամանակները՝ կերեւի թէ շարու-  
 թեան կողմնակիցները մէկտեղ դաշնակցելով, բոլոր ջանքերնին ՚ի գործ կը դնեն այն.

(1) Յղ. Բղք. Աստուծոյ, գիրք ԺԳ. գլ. ԻԸ.

23504-60

ընկերութեան առաջնորդութեամբ և աջակցութեանը ներքեւ որ Պրինադրականութիւն  
 Քարմասնութիւն քիւր կոչուի, որ և շատ տեղ տարածուած և հաստատուն կերպով  
 կազմուած է: Ասոնք արդարեւ բնաւ ամենեւին չժածկելով իրենց գիտմունքն ու խոր-  
 հուրդները՝ յանդգնաբար Աստուծոյ մեծ վայելչութեան դէմ կ'ապստամբին, յայտնի  
 համարձակ Սուրբ Եկեղեցւոյ կործանումը կը նիւթեն, որպէս զի քրիստոնեայ ազգերը՝  
 եթէ կարելի ըլլայ՝ բոլորովին զրկեն Յիսուսի Քրիստոսի Փրկչին Մերոյ շնորհած բա-  
 րիքներէն: Իսկ մենք հեծելով և ողբալով այսպիսի չարեաց առջեւը, շատ անգամ սի-  
 րոյ մղմամբ կը հարկադրինք գոչելու առ Աստուած, « ահա + ու ինչպիսիք յայնքին Բար-  
 րացոյցն, և զեւ ապրանքը զլաւինն վեր վերցոյցն. + ու ժողովրդեանը վրայ խորամանկութիւններ հար-  
 ձեցն, և + ու սքեցող վրայ խորհորհրներ բռն, ու բռն. եկէ +, ընչն + և կորսանցնն + զանն + ազգե-  
 բուն հզն » (1):

Սակայն այսպիսի ներկայ տագնապի մը դիմացը և քրիստոնէութեան դէմ եղած  
 այսպիսի անողորմ ու յամառ յարձակման մը առջեւը, զի պարտքն է որ վտանգը  
 ցուցնենք, հակառակորդները ծանուցանենք և անոնց խորհրդոց և խորամանկութեանց  
 կարելի եղածին չափ դէմ դնենք, որպէս զի չ'ըլլայ թէ յաւիտենական կորստեան մատ-  
 նըլին անոնք՝ որոնց փրկութիւնը մեր խնամոյցն յանձնուած է, և միանգամայն ալ Յի-  
 սուսի Քրիստոսի թագաւորութիւնը՝ որուն պաշտպանութիւնը մեր վրայ առած ենք՝ ոչ  
 միայն կանգուն և ամբողջ մնայ, հապա նորանոր բարգաւաճմամբ աշխարհքիս ամեն  
 կողմը ծաւալի:

Մեր նախորդները Հռովմայ Քահանայապետք՝ քրիստոնեայ ժողովրդեան փրկութեա-  
 նը վրայ հսկող արթնութիւններն շուտով ճանչցան այս դիտաւոր թշնամոյն ո՛վ ըլլա-  
 լը և ինչ ուզելը՝ բուն երբոր անիկայ զապտնի դաւաճանութեան խաւարներուն մէջէն  
 երեւան դալու կսկսէր: Եւ յառաջապետք արդարեւ նոյն Քահանայապետք ճայն տա-  
 լով իշխանաց ու ժողովրդոց զգուշացուցին զիրենք որպէս զի պատրաստուած խաբե-  
 բայ որոգայթից ու դարանակալութեանց մէջ չ'իյնային: Նախ և յառաջ կըլմէս ԺԲ.  
 (2) Քահանայապետը ծանոյց վտանգը յամին 1738 որուն Սահմանադրութիւնը Բենե-  
 դիկտոս ԺԳ. (5) հաստատեց ու նորոգեց: Այս երկու Քահանայապետաց շաւղին հե-  
 տեւեցաւ Պիոս Կ. (4) իսկ Լեոն ԺԲ. ամփոփելով իւր Սահմանադրութեանը մէջ (5)  
 այս նիւթիս վրայօք վերոյիշեալ Քահանայապետաց տուած վճիռներն ու դատակնիք-  
 ները՝ անոնց հաստատ և անխափան ցլխու մնայն հրամայեց: Նոյն իմաստով խօսեցան  
 Պիոս Բ. (6) Գրիգոր ԺԶ. (7) և զանազան անգամներ ալ Պիոս Թ. (8) Քահանայա-  
 պետք:

(1) Սղմ. 2Բ. 3-5:  
 (2) Սահմանադրութիւն In Eminenti, 24 Սպրիւի 1738:  
 (3) Սահմանադրութիւն Providas, 18 Մայիսի 1751:  
 (4) Սահմանադրութիւն Ecclesiam a Jesu Christo, 13 Սեպտեմբերի 1821:  
 (5) Quo graviora, 13 Մարտի 1825:  
 (6) Թուղթ Յրջարբերական Traditi, 24 Մայիսի 1829:  
 (7) Թուղթ Յրջարբերական Mirari, 15 Օգոստոսի 1832:  
 (8) Թուղթ Յրջարբերական Qui pluribus, 9 Նոյեմբերի 1846. — Բանախօսութիւնք Multipli-  
 ces inter, 25 Սեպտեմբերի 1865:

Եւ արդ Որմնադրական կամ ֆարմասուլեան աղանդոյն հիմնական վախճանն ու ու-  
 զին երեւան ելած ըլլալով իւր գործառնութեանց յայտնի նշաններէն, իւր սկզբանց ծա-  
 նօթութենէն, իւր կանոնաց արարողութեանց և անոնց մեկնութեանց հրատա-  
 րակութենէն, որոց ճշգրտութեանը շատ անգամ նոյն իսկ իրենց աղանդակիցք վիա-  
 յած են, այս Առաքելական Աթոռը ծանոյց և յայտնապէս հրատարակեց թէ Որմնա-  
 դրական կամ ֆարմասուլեան աղանդը ապօրինաւոր և չարագործ նպատակի համար կաղ-  
 մեալ ընկերութիւն մ'է, ոչ նուազ վնասակար քրիստոնէութեան քան քաղաքական  
 իշխանութեան. և ամենածանր պատիժներով՝ զորոնք Եկեղեցին սովորաբար մեծ յան-  
 ցաւորներու համար սահմանած է արդիւնց և հրամայեց որ չ'ըլլայ թէ մէկ մը այս  
 ընկերութեան մտնայ: Ասոր վրայ զայրանալով յիշեալ աղանդոյն անգամները, և կարծե-  
 լով թէ կարող պիտի ըլլան թէ՛ արհամարհանօք և թէ՛ զրպարտութեամբ իրենք զիրենք  
 ազատել այս վճռոց տակ իյնալէն և կամ ակարցնել անոնց զօրութիւնը, ամբաստա-  
 նեցին սոյն վճիռները տուող ճայրագոյն Քահանայապետները՝ իբր թէ անիրաւ բաներ  
 որոշած ըլլային, և կամ թէ իրենց որոշողութեանց մէջ դրած պատիժներուն չափն  
 անցուցած ըլլային: Այս կերպով ջանացին կղեւնայ ԺԲ. Բենեդիկտոսի ԺԳ. Ինչպէս  
 նաեւ Պիոսի Կ. և Պիոսի Թ. Առաքելական Սահմանադրութեանց իշխանութիւնը և զօ-  
 րութիւնը փճացնելու: Բայց սակայն նոյն իսկ այս աղանդաւորաց ընկերութեան մէջ  
 գտնուեցան ոմանք, որոնք յաւիտեայ կամ խոստովանեցան թէ ինչ որ Հռովմայ Քահա-  
 նայապետք բրած էին, այն ամենը իրաւ և արդարացի էր ըստ սկզբանց կաթողիկոսայ  
 վարդապետութեան և բարեկարգութեան: Եւ այս բանիս մէջ յայտնապէս տեսնուե-  
 ցաւ որ համամիա էին Քահանայապետաց հետ շատ մը իշխանք և պետք ճէրութեանց, ու-  
 ընք հոգ տարին թէ՛ Առաքելական Աթոռոյն առջեւն ամբաստանելու Որմնադրական  
 կամ ֆարմասուլեան ընկերութիւնը, և թէ՛ իրենք իրենցմէ օրէնքներ դնելու անոր դէմ  
 և իբր վնասակար դատապարտելու զայն, ինչպէս եղաւ ՚ի Հօլանտիա, յԱւստրիա, ՚ի Հե-  
 լուետիա, ՚ի Սպանիա, ՚ի Պովիէրա, ՚ի Սալոյիա և իտալիոյ կողմերը զանազան:

Բայց ամենէն աւելի դիտելու արժանի է որ՝ իրաց արդիւնքը հաստատեցին Մեր  
 Նախորդաց խոհեմ ընթացքը: Վասնզի անոնց նախատես ու հայրական հոգատարու-  
 թիւնը ոչ միշտ և ոչ ալ ամեն տեղ փափաքելի արդաւիքն ունեցաւ, և այս բանս  
 յառաջ եկաւ մէկ կողմանէ այն վնասակար աղանդոյն մէջ գտնուած մարդկանց կեղ-  
 ծաւորութենէն ու խորամանկութենէն, և միւս կողմանէ անխորհուրդ թեթեամտութե-  
 նէն անանց՝ որոնց շատ օգտակար պիտի ըլլար եթէ ատոր զգուշութեամբ մտադրու-  
 թիւն ընէին: Այս պատճառիս համար՝ մէկ ու կէս դարու միջոցին մէջ Պրինադրական  
 կամ ֆարմասուլեան աղանդը կարծուածէն աւելի աճեցաւ ու մեծցաւ, և յանդգնաբար  
 ու նենդութեամբ սարգելով մտնալով բոլոր պետութեանց դատակարգերուն մէջ՝  
 այնչափ մեծ ազդեցութիւն ստացաւ, որ կարծես թէ քաղաքներու մէջ իշխելու սկսաւ:  
 Եւ յիրաւի, այսպիսի արագ և ահաւոր տարածմանէն յառաջ եկան Եկեղեցւոյն՝ քա-  
 ղաքական իշխանութեան և հասարակաց սպառնուլութեան համար այն վնասները, զո-  
 րոնք Մեր Նախորդները շատանցուրէն ՚ի վեր նախատեսած էին: Եւ իրերը այն կէտը  
 հասած էին որ ապագայ ժամանակին համար ծանր երկիւղ կայ, ոչ թէ Եկեղեցւոյ  
 նկատմամբ՝ որ ամենահաստատ հիմանց վրայ կանգնուած ըլլալով, չկրնար վնասուիլ  
 մարդկանց ձեռքովը, այլ այն պետութեանց համար՝ որոնց մէջ շատ զօրացած է սոյն

այս Արմնադրական կամ Ֆարմասուսեան աղանդը կամ ուրիշ նմանօրինակ աղանդներ, որոնք անոր գործակից և արքանեակներն են:

Այս ամեն պատճառներուն համար՝ հազիւ թէ Եկեղեցւոյն ղէկը մեր ձեռքն առնիք, յայտնի անասնք և իմացանք այս մեծ չարեաց ըստ կարեւրոյն դէմ դնելու հարկաւորութիւնը Մեր իշխանութեան զօրութեամբը: Մտուելու շատ անգամ պարագայներէն յարմար առիթ քաղելով՝ խօսած ենք գլխաւորապէս այն վարդապետական մասանց վրայ, զորոնք Արմնադրական կամ Ֆարմասուսեան աղանդը կերպ կերպ կարծիքներով պղափոխած ու թիրաճ էր: Այսպէս մեր Շրջաբերական թղթովն ուրիշ սկզբնաւորութիւնն է Quod Apostolici muneris՝ ջանացինք մաքառելու Ընկերականաց և Հասարակականաց այլանդակ գրութեանցը դէմ, գարձեալ մեր միւս Շրջաբերական թղթով՝ որ կրկին Arcanum, հոգ տարինք պաշտպանելու և բացատրելու առանին ընկերութեան ճշմարիտ և հարազատ գաղափարը, որուն աղբիւրն ու ծագումը ամուսնութիւնն է: Իսկ Diuturnum բառի սկսած մեր Շրջաբերական թղթոյն մէջ մեկնեցինք՝ ըստ սկզբանց քրիստոնէական իմաստութեան՝ քաղաքական իշխանութեան էութիւնը, և ցուցուցինք անոր ունեցած զարմանալի ներդաշնակութիւնները թէ՛ նոյն իսկ բնական կարգին հետ և թէ՛ նաեւ ժողովրդոց և իշխանաց ապահով կացութեանը հետ: Իսկ այժմ՝ ըստ օրինակի նախորդաց մերոց՝ որոշեցինք ուղղակի մեր մտադրութիւնը դարձնելու Արմնադրական կամ Ֆարմասուսեան ընկերութեանը վրայ իւր ընդհանուր վարդապետութեանց ու խորհրդոցը վրայ, իւր զգացմանց և գործառնութեանցը վրայ, որով եւս առաւել պայծառ պիտի երեւնայ իւր չարագործ զօրութիւնը, և այսպէս կարելի պիտի ըլլայ այս աղետալի ժանտախտին ուրիշներու ալ փոխադրուելուն առաջը առնալը ուսմը:

Աշխարհքիս երեսը խել մը աղանդներ կան, որոնք թէպէտ մէկմէկէ կը տարբերին անուամբ, ծիսիւ, ձեւով և ծագմամբ, սակայն իրենց վախճանին ու էական սկզբանց նմանութեամբը՝ յարակից են իրարու և իրօք ալ կը միաբանին Արմնադրական կամ Ֆարմասուսեան աղանդոյն հետ՝ որ անոնց ամենուն իբր կեդրոնատեղին է, ուսկից կը յառաջանան և ուր կը վերադառնան: Եւ թէպէտ ասոնք ՚ի ներկայիս չեն ուղեր ծածկաբար գործել, ՚ի տես ամենեցուն ժողովրդներ ընելով ու լրագիրներ ՚ի լոյս հանելով, ՚ի վերայ այսր ամենայնի եթէ իրաց խորունկը թափանցելու ըլլանք՝ գաղտագողի ընկերութեանց կերպն ու տարազը պահած են: Վասն զի այս ընկերութեանց մէջ շատ մը խորհրդանման բաներ կան, զորոնք իրենց սահմանադրութիւնը խստիւ կարգելու չը յայանելու ո՛չ միայն գրսի մարդկանց հապա նաեւ նոյն իսկ իրենց կողմնակցաց շատերուն, այս տեսակէն են՝ ներքին և բարձրագոյն խորհուրդները, գլխաւոր պետաց անուանքը, շատ մը ծածուկ և ներքնագոյն չարածողութիւն, ինչպէս նաեւ անոնց մէջ առնուած որոշողութիւնք և զանոնք ՚ի զլուխ հանելու միջոցներն ու գործակատարները: Եւ յիրաւի առ այս կը վերաբերի ընկերակցաց մէջ իրաւանց, պաշտօնի և պարտաւորութեանց տարբերութիւնը, առ այս կը վերաբերի կարգաց և աստիճանաց տարբերութիւնը, և զամենքը կառավարող կարգադրութեանց խստութիւնը: Եւս անգամ անգամ գրբուր ուղղութիւնը պէտք է որ խոստանան, մանաւանդ թէ հանդիսաւոր երդում ընեն բնաւ երբէք և որ և իցէ եղանակաւ մէկու մը չյայտնելու անդամակցաց անուանքը, ինչպէս նաեւ ընկերութեան յայտարար նշաններն ու վարդապետութիւնը: Այսպէս

սուտակասպան երեւութիւն և կեղծաւորութիւնն իրենց վարմանց մշտնջենաւոր կանոն բռնելով, ինչպէս երբեմն Մանիքեցի աղանդաւորք՝ Արմնադիրք կամ Ֆարմասոնք ամեն ջանք ՚ի գործ կը դնեն ծածկաբար գործելու, և իրենց գործառնութեանցը՝ անդամակիցներէն ՚ի զատ ուրիշ վկայ չունենալու: Իրենց մեծ շահն ըլլալով իրենց ինչ ըլլալը չցուցնել՝ կը կերպարանին իբր՝ գիտութիւններ մշակելու վախճանաւ ընկերացած դըրասէր անձինք, կամ իմաստասէրք՝ Արագ է լեզունին քաղաքականութեան յառաջադիմութեանք, և ան ստորին ժողովուրդն զթոյճ վրայ խօսելու: և թէ՛ իրենց մի միայն նպատակն է ժողովրդոց վիճակը բարւոքել և անոնցմէ շատերը մասնակից ընել քաղաքական ընկերութեան բարեկեցիկ վիճակին: Բայց ենթադրելով եւս՝ որ այս իրենց գիտաւորութիւնը անկեղծ ըլլային, սակայն ասոնցմէ ՚ի զատ դեռ ուրիշ դիտումներ ալ ունին իրենք: Եւ յիրաւի, հարկ է որ անդամակիցք խոստանան և ընդունին գերագոյն յարգանք և հաւատարմութեամբ հնազանդելու իրենց մեծերուն և գլխաւորաց հրամանացը, կալմ և պատրաստ զանուելու անոնց ո՛ր և իցէ ակնարկութեան ու նշանին և հրամայուածները կատարելու, իսկ թէ որ հակառակը գործելու ըլլան այն ատեն ամենախիստ պատիժներու, նաեւ սպաննուելու իսկ պատրաստ ըլլալը: Եւ իրօք ալ՝ եթէ ստուգուի որ մէկ մը այս ընկերութեան գաղափար կարգադրութիւնքը դուրս հանած և կամ տրուած հրամաններուն հակառակ կեցած ըլլայ, շատ անգամ մահուան կը դատաւարտուի: և այս բանս այնպիսի յանդուրձեմամբ ու վարդապետութեամբ կը գործադրուի, որ յաճախ անգամ <sup>այսպէս</sup> կ'աղատի վերադէտ և յանցանաց վրէժխնդիր արդարութեան ձեռքէն: Արդ կեղծաւորիք և գաղտնութեան մէջ ծածկուած մնալը, ամենատարա կապանքներով մարդիկները իբր գերի իրենց հնազանդութեան պարտաւորելը ~~եւ այդ~~ առանց նախնաբար ծանուցանելու անոնց այս բանիս պատճառը, ըստ հաճոյից ոչոյց՝ ամեն կերպ ոճրագործութեան գանոնք գործիք ընելը, սպանութեան համար ձեռքերնին զինելը՝ յանցանքին անպատիժ մնալն ալ ապահովելով, այնպիսի անագորոյն գործեր են, որ նոյն իսկ բնութեան անհանդուրժելի են: Առտի բանականութիւնը և ճշմարտութիւնը կը հաւաստեն՝ որ վերոյսացեալ ընկերութիւնը կերպապէս հակառակ է բնական արդարութեան և բարոյականին:

Առտի անկէ պայծառ ապացոյցներ ալ կան, որոնք ևս առաւել յայտնի կ'ընեն թէ ո՛րքան այս ընկերութեան բնութիւնը համեստութեան հակառակ է: Արովհետեւ ո՛րչափ ալ մեծ ըլլան մարդկանց խորամանկ ճարպիկութիւնն ու ստախօսութեան ունակութիւնը, կարելի չէ՝ սակայն որ ինչ և իցէ գործ յառաջ բերած արդիւնքներէն կերպով մը իւր ի՛նչ ըլլալը չյայտնէ: Բարձր թաւ մը շինար գէշ պտուղներ բերել և ո՛ր գէշ ծառ մը՝ Բարձր պտուղներ (1): Արդ Արմնադրական կամ Ֆարմասուսեան աղանդոյն յառաջ բերած պտուղները թէ՛ վնասակար և թէ՛ խիստ դառն են: Ինչու որ ամենաստոյգ նշաններէ, զորոնք վերը յիշեցինք կը տեսնուի որ Արմնադրաց վերջնական նպատակն է հիմնայատակ կործանել ամբողջ կրօնական և ընկերական բարեկարգութիւնը, որն որ քրիստոնէական հիմնարկութեանց արգասիքն է, և անոր տեղը ուրիշ նոր մը դնել ըստ մըտաց իւրեանց՝ բնակրօնութիւնը իբր հիմնական սկզբունք և օրէնք առնելով:

(1) Մտթ. Կ. 18:

ինչ որ մինչեւ ցարգ ըսինք և կամ դեռ պիտի գրուցենք՝ պէտք է իմանալ Որ-  
մնադրական ալանդոյն նկատմամբ ընդհանրապէս առեալ, և ըստ որում կը պարու-  
նակէ յինքեան ուրիշ ընկերութիւններ ալ՝ որոնք իրեն մերձաւոր կամ դաշնակից են,  
և ո՛չ թէ անոնց ամեն մէկ անդամակցաց համար առանձինն : Վասն զի կրնան գտնուիլ  
իրաււորնէ ասոնց մէջ ո՛չ սակաւ անձինք, որոնք թէպէտ յանցանքէ զուրկ չեն այս-  
պիսի ընկերութեանց մէջ մտած ըլլալուն համար, սակայն անոնց վնասապարտ գոր-  
ծաւնութեանցը մասնակից չեն, և կ'անգիտանան ևս անոնց վերջին նպատակը՝ զոր կը  
ճգնին ձեռք բերելու : Նոյնպէս նաեւ կարելի է որ այդ ընկերութիւններէ մտանք  
գուցէ չհաւանին ինչ ինչ չափազանց հետեւութեանց, զորոնք <sup>այսինքն</sup> ընկերութեանց ըն-  
դունած ընդհանուր սկզբունքներէն արամարանորէն բղխելուն համար, պէտք էր որ  
ընդունէին և կ'ընդունէին եւս՝ եթէ <sup>անոնց բուն</sup> գարչելի տգեղութիւնը ինքնիրմէ զի-  
րենք <sup>իր վնասը</sup> Սակից դատ՝ ժամանակաց ու տեղեաց առանձին պարագաները կըր-  
նան համոզել այն խումբերէն ոմանք որ իրենց բաղձացած կէտէն աստին կենան, և  
կամ միւս ընկերութեանց ըրածին չափ չյանդգնին գործելու : սակայն պէտք չէ՝ հե-  
տեւցնել ասկից՝ այն խումբերը՝ Որմնադրականութեան՝ դաշնակից չ'ըլլալնէ : վասն  
զի Որմնադրականութեան պատկանիլը աւելի ընկալեալ հիմնական սկզբունքներէն դա-  
տելու է՝ քան թէ կատարած գործերէն :

Արդ բնակրօնից առաջին սկզբունքն այս է՝ ինչպէս իրենց անունէն ալ ըստ բաւա-  
կանի յայտնի է՝ որ ամեն բանի մէջ մարդկային բնութիւնն ու բանականութիւնը գլխա-  
ւոր և ինքնիշխան ըլլալու են : Հետեւաբար մարդուս առ Աստուած ունեցած պարտա-  
ւորութիւնները կամ բանի տեղ չեն դնել, և կամ անոնց էութիւնն իսկ կ'այլափոխեն  
մոլոր կամ անհետեւ կարծիքներով : Վասն զի կուրանան Աստուծոյ բնաւ ամենեւին  
յայտնութեան մը հեղինակը ըլլալը իրենց համար՝ բայց ի այն բանէն զոր մարդկային  
բանականութիւնը կրնայ ըմբռնել ո՛չ կրօնական վարդապետութիւն կայ, ո՛չ ճշմար-  
տութիւն և ո՛չ ալ ուսուցիչ որուն պէտք ըլլայ հաւատ ընծայել իւր ունեցած պաշտօ-  
նին իշխանութեանը համար : Եւ որովհետեւ կաթուղիկէ Եկեղեցւոյն յատուկ և միայն  
սեպհական պայտօնն է լիովին ընդգրկել և անապական ամբողջութեամբ պաշտպանել  
Աստուծոյ <sup>անհատ</sup> վարդապետութիւնները, ինչպէս նաեւ վարդապետելու իշխանութիւնը՝  
հանդերձ այլ ամենայն օգնականութեամբք ՚ի վերկութիւն հոգւոց, ասոր համար հակա-  
ռակորդաց բոլոր կատաղութիւնը և բուն յարձակմունքը Եկեղեցւոյ դէմ դարձած է,  
իսկ արդ եթէ նկատուի կրօնքի վերաբերեալ իրաց մէջ Որմնադրական աղանդոյն գոր-  
ծաւնութիւնը, գլխաւորապէս ուր որ արձակ համարձակ կրնայ գործել, ո՛չ արդեօք  
բացայայտ կ'երեւայ իւր նպատակը՝ բնակրօնից <sup>անհատ</sup> վճիռները իրօք գործադր-  
գործադրել ըլլալը : Եւ յիշուի ալ, երկար ու յամառ աշխատութեամբ այս բանին կը  
ճգնին՝ որ Եկեղեցւոյն վարդապետութիւնն ու իշխանութիւնը քաղաքաց մէջ ամենեւին  
ոյժ չունենայ, և ասոր համար կը քարոզեն ռամիկ ժողովրդեան և կը ջատագովեն այս  
սկզբունքը՝ թէ բացարձակապէս պէտք է <sup>իր վնասը</sup> ~~իր վնասը~~ <sup>իր վնասը</sup> իրարմէ զատել ու  
բաժնել : Որով կ'արտաքսեն կաթուղիկեայ կրօնից խիստ փրկաւէտ ազդեցութիւնը հա-  
սարակութեան օրէնքներէն ու կառավարութենէն, և հետեւաբար կը կարծեն թէ՝ հա-  
սարակութիւնը ամբողջապէս կազմաւորելու է Եկեղեցւոյն կարգադրութիւններէն ու  
պատուիրաքներէն <sup>անխառն</sup> եղանակաւ մը : Սակայն քաւական չեն սեպեր հեռացնե-

լու Եկեղեցին՝ որ բնաւ միջամտութիւն չ'ընէ մարդկային գործոց կառավարութեանը,  
հազա նաեւ զանիկայ իւր թշնամի նկատելով անոր դէմ կը բռնանան : Իրօք ալ, ան-  
պատահաս թոյլ արուած է իրենց արձակ համարձակ թէ՛ խօսքով, թէ՛ դրչով և թէ՛  
վարդապետութեամբ յարձակելու ընդդէմ նոյն իսկ կաթուղիկեայ կրօնից հիմանցը :  
Իրենց յարձակմունքէն զերծ չեն մնար ո՛չ Եկեղեցւոյն իրաւունքները և ո՛չ իսկ Աստու-  
ծոյ նախախնամութեան անոր շնորհած առանձնաշնորհութիւնները : Իրեն խիստ քիչ  
գործաւնութեանց ազատութիւն կը թողուի, և այս՝ այնպիսի օրինաց միջոցաւ որոնք  
թէպէտ գրօնաց շատ խիստ չեն երեւնար՝ բայց իրօք իրեն ազատութիւնը կաշկանդե-  
լու համարտ են, և <sup>այսինքն</sup> ~~ուր արդեօք~~ <sup>այսինքն</sup> նոյնպէս կը տեսնենք որ կըրին դէմ մասնա-  
ւոր և ծանր օրէնքներ դրուած են, որոնց նպատակն է օրէ օր նուազեցընել Եկեղե-  
ցականաց թիւն ու քիչցընել անոնց կարելի եղած միջոցները, իսկ Եկեղեցւոյն ստաց-  
ուածոց մնացորդքը հաղար ու մէկ կապիրու ներքեւ ինկած՝ Տէրութեան մատակա-  
րարաց քմայն ու հաճոյիցը ենթարկուած են, կրօնական կարգաց Միտարանութիւնը  
չնշուած կամ յիւր ու ցան եղած են, իսկ Առաքելական Աթոռոյն և Հռոմեայ Քահա-  
նայապետին դէմ հակառակորդաց ունեցած թշնամութիւնը՝ եւս առաւել զայրացած ու  
բորբոքած է : Նախ և յառաջ կեղծուպատիր պատճառանքներով մերկայոցին զՔահա-  
նայապետը իւր քաղաքական իշխանութենէն, որն որ իւր ազատութեան ու իրաւանցը  
հարկաւոր պայմանն էր, քիչ մը ետքը՝ ամենադժնդակ ու ամեն կողմէ դժուարութիւն-  
ներով պատեղող անտանելի վիճակի մը հասուցին զինքը : վերջապէս այս յետին ժամա-  
նակներս յիշեալ աղանդաւորաց կողմնակիցք այն բանը զոր դաղանաբար իրենց մէջը  
չատանցուրնէ ՚ի վեր կը խորհէին՝ յայտնապէս հռչակելու սկսան այսինքն թէ՛ Քահա-  
նայապետաց սրբազան իշխանութիւնը պէտք է վերցընել, և զնոյն իսկ Աստուածային  
իրաւանց կարգեալ Քահանայապետութիւնն ալ հիմնովին բնաջինջ ընել : Այս բանին <sup>հոգաւոր</sup>  
բախտութիւնը ցուցընելու համար եթէ ուրիշ ազդեցոյցներ չ'ըլլային՝ բաւական պիտի  
ըլլար ՚ի մէջ բերել գրեցապետներն վկայութիւնը, որոնցմէ շատերը յաճախ անգամ թէ՛  
անցելոյն մէջ և թէ՛ մօտակայ ժամանակներս վկայեցին թէ՛ իրօք Որմնադրաց ճշմարիտ  
նպատակն էր զլիաւորապէս հալածել կաթուղիկեայ կրօնը անհաշտ տտելութեամբ  
մը, և թէ իրենք ասկից ետ չպիտի կենային՝ մինչեւ որ ՚ի հիմանց չկործանէին Քահա-  
նայապետներուն հաստատած որ և իցէ կրօնական հիմնարկութիւնները : Իսկ թէ որ  
այս ընկերութեան դրուող անդամք պարտաւորուած չեն բացոյցայտ կերպով ուրանա-  
լու կաթուղիկեայ հաւատքը, այս բանս փոխանակ վնասելու Որմնադրական աղան-  
դոյն գիտմանցը՝ եւս առաւել նպատաւոր է իրեն, ինչու որ նախ և յառաջ այս ճամ-  
բով դիւրաւ կը խաբեն պարզամիտ և անզգոյշ մարդիկները, և յետոյ շատերուն ալ  
գրգռու մը կ'ընծայեն անդամակից ըլլալու : Նոյնպէս՝ այլ և այլ կրօնքներէ իրենց դի-  
մոզներն ընդունելով, այս նպատակին կը հասնին որ իրօք կը համոզեն մարդիկները թէ՛  
կրօնքի հոգն ու մտածութիւնը անտարբեր իրաց մէջ գտնելու է, որն որ ներկայ ժամա-  
նակին սեծ մուրթութիւնն է՝ և թէ հաւասար բռնելու է բոլոր կրօնքները : Արդ՝ այս  
սկզբունքն ինքնիրեն կը դիտէ կործանելու ամեն կրօնքները և ՚ի մասնաւորի կաթու-  
ղիկեայ կրօնը, որ մի միայն ճշմարիտ կրօնքն ըլլալով՝ չկրնար երբէք հանդարտել որ  
այսպիսի ծայրագոյն անիւաւութեամբ մը միւս կրօնից հետ հաւաստակից սեպուի :  
Բայց բնակրօնք աւելի առաջ ալ կ'երթան : Վասն զի ամենամեծ անբ իրաց մէջ յան-



դրնաբար մոլար ճամբուն մէջ նետուելով՝ գահալէժ ընթացքով մը մինչեւ վերջին ծայրի հետեւութեանցը կը դիմեն, մըբալք թէ՛ մարդկային բնութեան տկարութեամբ թէ՛ գատաստանան Աստուծոյ որն որ այսպէս կը պատժէ արգարութեամբ հպարտները: Ասկից կը հետեւի որ՝ նոյն իսկ բանականութեան բնական լուսովն իմացուած ճշմարտութիւնները իրենք հաստատուած և անշարժ չեն բռներ. ինչպէս են, Աստուծոյ գոյութիւնը, մարդկային հոգւոյն աննիւթականութիւնը և անմահութիւնը: Արդ Որմնադրական աղանդը նմանօրինակ մոլորութեանց յորձանքին մէջ ինչալով՝ սոյն այս փայտերուն <sup>հիմն</sup> <sup>չարեւապէս</sup> զարկած է: Որովհետեւ թէպէտ առ հասարակ կը դաւանին իրենք Աստուծոյ գոյութիւնը, սակայն նոյն իսկ իրենց անդամակցաց վկայութիւնը կը հաստատէ որ՝ իւրաքանչիւր անհատի համար այս հաւատքը հաստատուն համոզում մը չէ՛, և ոչ ալ անդրդուելի ստուգութիւն մ'ունի: Արդարեւ չեն կեղծեր իրենք՝ որ այս Աստուծոյ գոյութեան խնդիրը մեծամեծ անհամաձայնութեանց աղբիւր և սկզբնապատճառ եղած է իրենց մէջ, մանաւանդ թէ մտակայ փամանակներս այս նիւթիս վրայօք ծանրը վիճաբանութիւն մը տեղի ունեցած է: Եւ իրօք ալ, յիշեալ ազոնքը նորամուտ անդամաց ինքի ազատութիւն մը կուտայ այս կամ այն կարծեաց տէր ըլլալու, այսինքն կամ Աստուծոյ գոյութիւնը ընդունելու և կամ մերժելու. և անոնք որ յամառութեամբ կը պնդեն թէ Աստուած չկայ՝ այնչափ դիւրաւ կ'ընդունուին ընկերութեանը մէջ, որքան անոնք որ թէպէտ Աստուծոյ գաղափարը պահած են՝ բայց ազաւազելով զայն, ինչպէս են համաստուածք. որն որ ուրիշ բան բտել չէ՛, եթէ ոչ Աստուածային բնութեան այլանդակ երեւոյթ մ'ընդունիլ և իւր ճշմարտ ետթիւնը ջնջել վերջինը: Արդ երբոր այս կարեւոր հիմը կործանի և կամ խախտի, յայտնի է որ բընական կարգին միւս սկզբունքներն ալ երերուն կ'ըլլան մարդկային մտաց համար, ինչպէս օրինակի ազագաւ՝ թէ արարչագործութիւնը Արարչին ազատ կամօքն եղած է, նախախնամութիւն մը կայ որ աշխարհքս կը կառավարէ, հոգիք անմահ են և թէ ներկայ կենցաղոյս պիտի յաջորդէ հանդերձեալ ահմահ կեանք մը:

Բնական կարգին հիմնական ճշմարտութիւնները՝ որոնք մեծ ազդեցութիւն ունին կենաց բանական և գործնական ընթացքին վրայ, անգամ մը որ րայքային ու կործանին՝ դիւրաւ կը տեսնուի թէ ի՞նչպիսի փրաններ պիտի հասնին առանձնական և հրապարակական բարուց նկատմամբ: Լուսութեամբ կանցնինք այն գերբնական առաքինութիւնները, զորոնք ոչ ոք կրնայ գործադրել և ոչ ստանալ առանց Աստուծոյ մասնաւոր շնորհացը. առաքինութիւնք՝ որոց շուքն անգամ ՚ի հարկէ չկրնար տեսնուիլ այն մարդկանց վրայ, որոնք անարդարար անգիտանալ կը ձեւացընեն մարդկային ազգին վերկապործութիւնը, երկնային շնորհքները, սուրբ խորհուրդները և երկնից մէջ ձեռք բերուելիք երջանկութիւնը: Մի միայն մեր խօսքը այն պարտաւորութեանց վրայ է, որոնք բնական համեստութենէն յառաջ կուգան, վասն զի ամեն արգարութեան և համեստութեան սկզբունքները հետեւեալներն են. աշխարհքիս արարիչը՝ նախախնամ մտն ու կառավարողը Աստուած է, յաւիտենական օրէնք մը կայ՝ որ կը հրամայէ բընութեան կարգը պահպանել և կ'արդելու վրդովել զայն, մարդս վերջին վախճան մը ունի՝ որն որ շատ դերազանց է մարդկային գործերէն և այս երկրաւոր պանդխտութեան օթեւանէն անդին է. Հեղ մը որ այս ճշմարտութիւնը վերցուին, ինչպէս սովոր են ընել բնակրօնք և Որմնադրքս ալ անկարելի կ'ըլլայ գիտնալ՝ թէ արգարութիւնն

ու անարգարութիւնը ի՞նչ բանի մէջ կը կայանան և թէ ի՞նչ հիման վրայ հաստատուած են: Իսկ բարոյականի նկատմամբ, որ մի միայն Որմնադրական աղանդոյն անդամաց հաճոյ և ընդունելի եղած է և որուն մէջ անհրաժեշտ եղանակաւ երիտասարդութիւնը հրահանգել տալու կը ճգնին, այն բարոյականն է՝ որուն իրենք բարոյական և ազատ քարոյական անունը կուտան, այսինքն՝ այնպիսի բարոյական մը, որմէ ո՛ր և իցէ կրօնական գաղափար արտաքուստ ըլլայ: Արդ, ո՛րչափ այսպիսի բարոյական մը անբաւական և անհաստատ, ու կրից ամեն ազդեցութեանց ներքեւ ընկճեալ գտնուիլը՝ ըստ բաւականի կը տեսնուի այն ցաւալի արգասիքներէն, որոնք մասամբ երեւան եկած են: Եւ յիշուի ալ, որ որ ատիկայ քրիստոնէական բարոյականին տեղն անցնելով աւելի ազատութեամբ տիրապետելու սկսաւ, հոն մէկէն բարուց անարատութիւնն ու ամբողջութիւնն անհետացան, այլանդակ և անճոռնի կարծիքներն աճեցան ու զօրացան, և սճրագործութեան յանդ զնութիւնը վերջին աստիճան գլուխը վեր վերցուց: Այս ամեն չարեաց վրայ կու ընն ու կողքան ժողովուրդք առ հասարակ. և այս բանիս յակամայ կամ շատերը կը վկայեն շատ անգամ՝ յայտնի ճշմարտութենէն մղուելով:

Բաց ասկից՝ մարդկային բնութիւնը սկզբնական մեղքը ապականած ըլլալով և այս պատճառիս համար աւելի հակեալ ըլլալով դէպ ՚ի մոլորութիւն քան թէ յառաքինութիւն, բացարձակապէս հարկաւոր է համեստութեան համար՝ որ հոգւոյն անկարգ կիրքերը զսպուին, և զգայութիւնք բանականութեան հնազանդին: Այս ներքին պատերազմին մէջ՝ ստէպ անգամ երկրաւոր շահերն անարգելու և խիստ աշխատութեանց և նեղութեանց համբերելու է, որպէս զի այսպէս բանականութիւնը միշտ իւր իշխանութեամբ յաղթող հանդիսանայ, Սակայն բնակրօնք և Որմնադրքը ամենեւին հաւատք չ'ընծայելով Աստուծոյ յայտնած ճշմարտութեանցը՝ կ'ուրանան որ մարդկային ազգին նախահայրը միղանչած ըլլայ, և հետեւաբար կը կարծեն թէ մարդուս ազատ անկիրճանութիւնը բնաւ ախարացած ըլլաւ և ոչ ՚ի շարն հախեալ (1): Նա՛ մանաւանդ չափազանցօրէն նկատելով բնութեան զօրութիւնն ու դերազանցութիւնը, և մի միայն անոր վրայ դնելով ալ գարութեան սկիզբն ու կանոնը, չեն կրնար և ոչ իսկ ըմբռնել թէ անընդհատ ճգանց և խիստ յարատեւութեան պէտք կայ՝ բնութեան յուզմունքը շիջուցանելու և զգայութեանց սանձ մը դնելու համար: Ուստի կը տեսնանք որ՝ առ հասարակ դիւրամատոյց կ'ըլլուին ժողովուրդաց խել մը բաներ, որոնք իրենց կիրքերը կը շողքորդեն. լրագիրներ և տեսարակներ՝ որոցմէ պատկառանքն ու ամօթը բոլորովին արաքսուած են, թատերական ներկայացմունք՝ որոնց մէջ անառակութիւնը նշանաւոր հանդիսացած է, արհեստաւորաց ձեռակերտներ՝ որոնց վրայ պժգալի լրբութեամբ դրոշմուած են իրականութիւն կոչուած արգի դրութեան սկզբունքները. փափկասուն և թոյլ կենաց համար նրբատեսակ արուեստասիրութիւնք. մէկ խօսքով՝ ամեն ջանքով ՚ի գործ դրուած են առ հեշտութիւնս հրապոյրք, որոնցմով թուլնալով առաքինութիւնը՝ վերջապէս կը զիջանի անոնց՝ աչք դոցելու: Այս բանիս մէջ՝ մէկ կողմանէ յիշուի յանցաւոր են, բայց միւս կողմանէ ալ իրենց սկզբանց համաձայն կը գործեն անոնք՝ որ երկնային բարեաց յոյսը վերցընելով, մարդուս բոլոր երջանկութիւնը վաղանցուկ իրաց վրայ կը դնեն՝ և գրեթէ նոյն իսկ յերկրաւոր վայելս կը կացու-

(1) Տրիգ. Ժող. նիստ 2. Յդ. արդար. գլ. Ա.

ցանկն զայն : Այս ըստածները կրնայ հաստատել այնպիսի բան մը որն որ թէև դժ-  
ուարին 'ի հաւատալ , այլ իրական է : Այսինքն թէ՛ որովհետև ո՛չ ոք սովոր է  
այնքան ծառայական եղանակաւ հնազանդիլ խորամանկ և խաբերայ մարդկանց՝ որչափ  
անոնք անոնց սիրաբ ցանկութեանց տիրապետելովը թուլցած և տկարացած է , ասոր  
համար Որմնադրականաց մէջ գտնուեցան այնպիսիներ՝ որոնք հաստատեցին և առա-  
ջարկեցին թէ ամեն ճիգ թափելու է՝ որպէս զի ժողովուրդը յագենայ անհամար լիբր  
մտութիւններով , վասն զի մոլիները առ որ իցէ յանդուզն գործաւնութիւն մղելը ի-  
րենց իշխանութենէն և կամքէն կախուած դիւրին բան մը կ'ըլլար :

Իսկ առանին ընկերութեան նկատմամբ ահաւասիկ հաճախու ընակրծնից ամ-  
բող վարդապետութիւնը , Ամուսնութիւնը տեսակ մը ~~ստորակարգ~~ ստորակարգ վարդապետութեան զաշինք է ,  
որ իրաւամբ կրնայ լուծուիլ ըստ կամաց դաշնակցելոց . պետութ-  
խանութիւն ունին ամուսնական կապին վրայ : Տղայոց դաստիարակ-  
նաւ ամենեւին կրօնքի վերաբերեալ բան մը պէտք չէ սորվեցնել անոնց ստոյգ և սրոշ  
եղանակաւ . ըստ ամենայնի իրենց ձգելու է որ՝ երբ չափահաս ըլլան՝ լուսագոյն սե-  
պած կրօնքին հետեւին : Իսկ արդ 'ի սոյն այս վարդապետութիւն կը միաբանին Որմնա-  
դրականքն ո՛չ միայն կը միաբանին , այլ և հետաքննու են բարուր և սովորութեան մէջ մտցը-  
նելու զայն : Սրբէն իսկ շատ մը տեղուանք՝ նոյն իսկ կաթողիկոսայ անունը կրող երկիրնե-  
ներու մէջ՝ հաստատուած է որ քաղաքային ամուսնութենէն զատ ուրիշ օրինաւոր պը-  
տակ չսեպուի . տեղ տեղ օրէնքը հրաման կուտայ պսակը լուծել . ուրիշ տեղ՝ ամեն ճիգ  
կը թափուի , որպէս զի օր մը առաջ այս բանս իրենց օրինադրութեան մէջ ալ մտցուի :  
Ասանկով դէպ 'ի այն կէտը կը դիմեն փութով՝ որ ամուսնութեան էութիւնը յայլ իմն  
փոխուի , այսինքն 'ի փոփոխական և անհաստատ միութիւն մը , որոյ կապը բարձր ցան-  
կութիւնն <sup>հաստատ</sup> փոխուելովը լուծուի : Նայնպէս Որմնադրական աղանդոյն անդամք  
իրենց բոլոր ճիգն ու ջանքը 'ի գործ կը դնեն , որպէս զի երկտասարդաց կրթութիւնը  
ձեռքերնին անցընեն : Որովհետև կը յուսան թէ՛ այս եղանակաւ դիւրին պիտի ըլլայ  
իրենց ձեռակերպելու ըստ քմաց իւրեանց մատաղերով մանկոյն սիրաբ , և իրենց ու-  
ղած կրթութիւնը տալու անոնց . այս միջոցաւ միայն կը կարծեն թէ՛ կարող պիտի ըլ-  
լան պատրաստել իրենց երեւակայած քաղաքական ընկերութեան համար նոր տեսակ  
քաղաքայիններ : Առաի այս պատճառաւ աղայոց դաստիարակութեան և կրթութեանը  
մէջ չեն ուզեր բնաւ երբէք որ Եկեղեցւոյն պաշտօնեայիներէն գտնուին , ո՛չ առաջու-  
թեան համար և ո՛չ հսկողութեան . և արդէն իսկ խել մը երկիրներու մէջ յաջողեցան  
բարոյականին ուսմանէն բոլորովին արտաքսեցին այն խիստ մեծ և սրբազան պարտա-  
ւորութիւնները , որոնք զմարդս Աստուծոյ հետ կը միացնեն :

Յետոյ կուգան քաղաքագիտական վարդապետութիւնք , Ահաւասիկ այս նիւթին  
վրայօք ընակրծնից սկզբունքները . մարդիկ հաւասարապէս մի և նոյն իրաւանց տէր են ,  
ու ըստ ամենայն նկատման՝ յար և նման վիճակի մէջ կը գտնուին ամենքն ալ . իւրա-  
քանչիւր սք բնութեամբ ազատ է . ո՛չ ոք իրաւունք ունի ուրիշին հրամայելու , ուստի  
բռնանալ է մարդկանց վրայ պահանջելը՝ որ անոնք որ և իցէ իշխանութեան մը հնա-  
զանդին , միայն թէ այս իշխանութիւնը իրենց ուղղած ըլլայ : Վասն որոյ ամեն բան  
կը կայանայ յազատ կամս ժողովուրդոց . հրամանատարք՝ ժողովրդեան հաճութենէն կամ

թոյլտուութենէն կ'առնուն իրենց իշխանութիւնը . այնպէս որ ժողովուրդեան կամաց փո-  
փոխմամբ՝ օրէն է նաեւ իշխանները իրենց աստիճանէն վար առնել յակամայ կամս  
իսկ : Ամենայն իրաւանց և քաղաքային պաշտամանց ազբիւրը կամ բազմութիւնն է , և  
կամ պետութիւնը կառավարող՝ ըստ նորագոյն սկզբանց կազմակերպեալ իշխանութիւ-  
նը : Բայ ասկից հասարակութիւնը անաստուած ըլլալու է . ինչու որ այլ և այլ կրօ-  
նական դրութեանց մէջ՝ մէկը միւսէն նախագաս համարելու պտտճաւ մը չկայ . ուս-  
տի մի և նոյն եղանակաւ զանոնք ամենքն ալ հաւատար բռնելու է :

Սրբ խիստ յայտնի բան մ'է և բնաւ ազայցուցանելու հարկ չկայ՝ թէ Որմնադր-  
այս վարդապետութիւններուն կը հաճին , և թէ այս օրինակին ու նմանութեան համե-  
մատ կ'ուզեն կազմել <sup>հաստատ</sup> ընկերութիւնները : Արդէն իսկ երկայն ժամանակէ 'ի վեր յայտ-  
նապէս կ'աշխատին այս բանին՝ բոլոր իրենց ոյժն ու հնարքները 'ի գործ դնելով , և այս  
կերպով ալ ճամբայ կը բանան ուրիշ բազմութիւ և յանդգնագոյն աղանդաւորաց , ո-  
րոնք <sup>այսինքն</sup> ալ <sup>այսինքն</sup> ~~ալ~~ հետեւութիւններու գահալէժ կ'ընթանան , ինչպէս անոնք <sup>այսինքն</sup> ~~որոնք~~  
քաղաքացւոց մէջ ամեն զանա <sup>անոնք</sup> ~~անոնք~~ աստիճանի և ստացուածոց շնչելով ~~խորտակ~~  
ասարակ ամենուն հաւասարապէս <sup>անոնք</sup> ~~անոնք~~ կը մտաբերեն :

Մինչև ցարդ համառօտիւ ըստ <sup>այսինքն</sup> ~~այսինքն~~ ըստ բուսականի կը տեսնուի Որմնադրա-  
կան աղանդոյն ի՛նչ ըլլալը , և ի՛նչ ճամբու վրայ քայլելը : Անոնց գլխաւոր վարդապե-  
տութիւնները այնպիսի բացայայտ և կատարեալ եղանակաւ բանականութեան անհա-  
մաձայն են՝ որ ալ անկից աւելի մոլոր բան մը չկրնար ըլլալ : Եւ իրօք ալ , նոյն ինքն  
Աստուծոյ հաստատած կրօնքն ու Եկեղեցւոյն զոր և մինչև ցկատարած աշխարհի ինքն  
Աստուած կը պաշտպանէ՝ կործանելու , և տեղը՝ յետ քսան դարոց՝ հեթանոսաց բար-  
քն ու կարգադրութիւնները մեք մէջը մտցընելու ջանալը ծայրայեղ յիմարութեան և  
ամենայնադուզն ամբարշտութեան գործ մ'է : Սակայն ո՛չ նուազ զարհուրելի և կամ  
հանդուրժելի բան մ'է տեսնալը որ՝ կ'անարդուն Յիսուսի Քրիստոսի գթասէր բարու-  
թիւնները , զոր շնորհած է մարդկան ոչ միայն <sup>հաստատ</sup> ~~այլ~~ նաեւ 'ի խումբ ընտան-  
եաց և կամ 'ի քաղաքական հասարակութեան ժողովելոց , բարութիւնք՝ որոնք ըստ նոյն  
իսկ հակառակօրդաց վկայութեան՝ խիստ մեծ արժէք ունին : Սրբարեւ , այսպիսի յի-  
մար և եղեռնաւոր դիմաւ մը մէջ կարծես թէ կրնայ ճանչցուիլ այն անշխանելի ա-  
տելութեանը և վրէժինդրութեան ոգին , որով ստատման վառուած է Յիսուսի Քրիս-  
տոսի դէմ : Նմանապէս ոչ այլ ինչ բայց միայն անարգութիւն և անպատուութիւն կը  
ըներէ մարդկային ազգին վրայ և դէպ 'ի իւր կորուստը կը մղէ կը տանի զայն՝ Որմնա-  
դրաց կամ ֆարսանայեան այն միւս նպատակը , որուն համար իրենց բոլոր ճիգը կը թա-  
փեն , այսինքն է՝ արգարութեան և համեատութեան գլխաւոր հիմարը քայքայել , ու  
գործակից ըլլալ անոնց՝ որոնք կ'ուզեն ըստ նմանութեան անանոց իրենց կամաց ու-  
ղածը օրինաւոր սեպել : Այլ և չարիքը կ'աւելնայ այնու զի առանին և քաղաքական  
ընկերութեան դէմ տեսակ տեսակ վտանգներ կը պատրաստուին : Եւ արդ , ինչպէս  
ուրիշ անգամ գրուցած ենք , առ հասարակ բոլոր ազգաց և ժամանակաց վկայութեամբը  
հաստատուած է որ՝ ամուսնութեան մէջ սրբազան և կրօնական իր մը կայ , իսկ Աստ-  
ուածային օրէնքը կ'արգելու որ՝ չ'ըլլայ թէ բնաւ ամուսնական միութիւնք լուծուին :  
Եթէ ամուսնութիւնը անսուրբ բանի տեղ դրուելու ըլլան , և թէ որ թող արուի քա-  
կելու դոնոնք , 'ի հարկէ ընտանեաց մէջ չ'իթութիւնը և խառնակութիւնը տեղի պի-

200/2

տի ունենան, կանայք իրենց պատուէն պիտի իյնան և անսորչ ու անապահով պիտի ըլլայ իրենց կայսրութիւնը՝ ինչպէս նաեւ իրենց սերնդեան վիճակը: Նոյնպէս պետութեան բնաւ երբէք կրօնքի նկատմամբ հօգ չունենալը, և քաղաքական գործոց կարգադրութեան ու մատակարարութեանը մէջ Աստուած իրօք չի կայի պէս ամենեւին ~~Աստուածայ իրօքը չըլլալը~~, ասիկայ անուր յանդգնութիւն մ'է նոյն իսկ հեթանոս ազգաց՝ որոնց սրտին և սրբոյն մէջ ա՛յնպէս մը խորունկ գրոշմուած էր ո՛չ միայն Աստուածութեան գաղափարը՝ այլ նաեւ առ հասարակ կրօնքի մը հարկաւորութիւնը, որ աւելի դիւրին և կարելի բան մը կը համարէին քաղքի մը առանց գետնի վրայ կռթնելու քան թէ առանց Աստուծոյ կանգուն կենալը: Յիրաւի ալ, մարդկային ընկերութիւնը որուն համար բնութիւնը զմեզ ստեղծած է՝ Աստուծմէ կազմուած է, որն որ բնութեան հայր է. և իրմէն իբր ՚ի սկզբանէ և ազրիւրէ մը՝ կը ծագի անթիւ անհամար բարութեանց ամբողջ զօրութիւնն ու մշտնջենաւորութիւնը, <sup>չորսուած</sup> ինքը կ'առատաձեռնէ մարդկոնց: Ուստի՝ ինչպէս որ բնութեան ձայնը կը դրդէ ամեն մէկերնիս առանձինն բարեպաշտութեամբ և սրբութեամբ զԱստուած պաշտելու՝ նոյն որ իրմէ առած ենք մեր կեանքն ու անոր յարակից բարութիւնքը, նոյն իսկ ~~հաստատու~~ նոյն պարտաւորութիւնը ունին ժողովուրդք և ընկերութիւնք: Ո՞ր յայտնի է թէ՛ անոնք որ կ'ուզեն քաղաքական հասարակութիւնը ազատ կացուցանել ո՞ր և իցէ կրօնական պարտաւորութենէ, ոչ միայն անիրաւութիւն կը գործեն՝ այլ նաև իրենց տգիտութիւնն ու այլանդակութիւնը կը ցուցնեն: Իսկ որովհետեւ Աստուծոյ կամօքն է որ մարդիկ միաբան և ընկերութեամբ ապրելու համար աշխարհք կուգան. և հրամայելու իշխանութիւնը այնպիսի հարկաւոր կապ մ'է քաղաքական ընկերութեան՝ որ եթէ անգամ մը վերցուելու ըլլայ՝ հարկ է որ անմիջապէս ընկերութիւնն ալ լուծուի, կը հետեւի թէ այն էակէն որմէ ընկերութիւնը կը ծագի իբր ՚ի հօրէ, կը ծագի եւս և անոր հրամայելու իշխանութիւնը: Ասոր համար՝ ո՛վ որ ալ ըլլայ այն անձը, որուն ձեռքն է իշխանութիւնը այնպիսին Աստուծոյ պաշտօնեայն է: Հետեւաբար որչափ որ մարդկային ընկերութեան վախճանն ու բնութիւնը կը պահանջեն՝ օրինաւոր իշխանութեան՝ երբոր արդարացի բաներ կը հրամայէ, հետադարձաբար պարտաւոր է մարդոց այնպէս ~~պաշտելու~~ նոյն իսկ Աստուծոյ գերագոյն իշխանութեանը՝ որ ամեն բան կը կառավարէ: ~~Աստուծոյ բարբառովն ճշմարտութեան հակառակ է ըսելը որ՝ ժողովրդեան կամքէն կախում ունի հնազանդութիւն չմտաւոյցանելը, ինչպէս որ ուզելու ըլլայ՝ նմանապէս եթէ նկատուիք մարդկանց մի և նոյն ցեղէն յառաջ եկած և մի և նոյն բնութեան մասնակից ըլլալը, և մի և նոյն վերջնական վախճանը, զարաստանդը ամենուն հաստատարուած է, և եթէ դիտուիք բնականապէս անկէց ծագած պարտաւորութիւնքն ու իրաւունքները, տարակոյս չկայ որ առ հասարակ մարդիկ հաւասար են իրարու: Բայց որովհետեւ ամենքն ալ զուգահաւասար հանձարոյ տէր չեն կրնար ըլլալ, և մէկը միւսէն կը զանազանուի թէ՛ մտայ կարողութեամբք և թէ՛ բնական կորովով, և բարոյց՝ տխորժակաց և բնութեանց շտապը զանազանութիւններ կան, ուստի ըստ ամենայնի բանականութեան հակառակ է որ՝ ամեն մարդիկ մի և նոյն սահմանի մէջ պարունակուին, ու քաղաքական կենաց հաստատութեանց ծառայելու ամեն կերպով խտրութեան չուստարձեռնք մը ամենքը կրնան ընծայել:~~ Ինչպէս ուրեմն մարդկային մարմնայն կատարեալ կազմակերպութիւնը այլ և այլ անգամայն կապակցութենէն ու մերձաւորութենէն յառաջ կուգայ, որոնք

որչափ որ իրենց ձեւովն ու պաշտօնովն մէկմէկէ կը <sup>չամայակով</sup> նայուին, սակայն բարեխարմար միաւորութեամբ ու ներդաշնակ համընթացութեամբ մը ամբողջ մարմնայն իւր վայելուչ կերպն՝ զօրութիւնը և օգտակարութիւնը կուտան կարեւոր ծառայութիւնները մատուցանելու համար. նմանապէս մարդկային ընկերութեան մէջ գրեթէ անթիւ անհամար օտարբերութիւններ կան անդամաց և մասանց, որոնց թէ որ ամենքն ալ իրարու հաւասար ըլլային՝ և իւրաքանչիւրն ըստ իւր հաճոյից գործելու ըլլար, ասկից աւելի անձեւ ու անհեղեղ քաղաքական ընկերութիւն մը չեր կրնար մտածուիլ. իսկ եթէ ընդ հաւառակն՝ արժանապատուութեան, ճաշակաց և յաջողակութեանց հանձարեղ դասակարգութեամբ մը, անոնցմէ ամեն մէկը հասարակաց օգտին նկրտելու ըլլայ, այն ատեն բարեկազմ ու բնութեան յարմար ընկերութեան մը պակերը կը ներկայացնեն:

Սակայն մինչև ցարգ յիշատակուած վնասակար մոլորութիւններէն՝ կը վախցուի որ պետութեանց վրայ մեծամեծ վտանգներ պիտի հասնին: Վասն զի, հեղ մը որ Աստուծոյ երկիւզը և Աստուածային օրինաց պարտ ու պատշաճ յարգութիւնը վերնայ, տէրութեանց զլուխներուն իշխանութիւնք իւր յարգը կորսուելիք է, թոյլտուութիւն և հաւանութիւն արուի յեղափոխական ցնորից. ու արձակ ու համարձակ ազատութիւն չնորհուի ժողովրդական կրից՝ առանց ուրիշ անձի տակ զսպելու բաց ՚ի պատժօց, ՚ի հարկէ ընդհանուր <sup>չգտանալու</sup> և վրդովանալու անկից յառաջ պիտի գան, նա՛ մանաւանդ նոյն իսկ այս յեղափոխութիւններէն՝ կ'ստի մը <sup>պարտաւոր</sup> առավարականաց և ընկերակցականաց հետ միաբանող ընկերութեանց բանդիտած նպատակք, որոնց գործառնութիւններէն Որմնադրական ազանգը իրաւունք չունի ինքզինքը անմասն համարելու, ինչպէս որ անոնց խորհրդոցը <sup>բարեբախտ</sup> կը նպատակէ, և սկզբանց մասին ալ՝ բոլորովին համաձայն կը գտնուի անոնց հետ: Իսկ թէ որ այս ծայրայեղ հետեւութիւններն անմիջապէս և ամեն տեղ չեն արդիւնաբեր, այս բանն ո՛չ յիշեալ ազանգոյն և ո՛չ ալ անոր կամօքը արդասիք սեպելու է. հապա նախ և յառաջ կրօնքից Աստուծային զօրութեանը, որն որ չ'կրնար երբէք չնջուիլ և անհետանալ, և յետոյ նաեւ մարդկային ընկերութեան սղջամիտ մասին՝ որն որ չ'հանդուրժելով ամենեւին գաղտագողի ընկերութեանց լուծին տակ մտնալու, քաջատարութեամբ կը մարտնչի անոնց յիմար գործառնութեանցը դէմ:

Եւ երանի թէ ամեն մարդիկ իւր պտուղներէն դատէին ծառը, և ճանչնային հասկնային այս ամենաճանր ու վտանգալից չարեաց սերմն և սկզբնապատճառը: Խաբերայ և նենգամիտ թշնամի մ'է դիմացիննիս, որ շողքորթելով յսկանջս իշխանաց ու ժողովրդոց՝ իւր մեղկարան վարդապետութիւններովն ու կեղծաւորութեամբը կ'որոտայ զանոնք, Որմնադրաց բարեկամութիւն կեղծաւորելով՝ իշխանաց աչքը մտնալուն վախճանք այս էր որ զանոնք իրենց հօր ընկերակից ու ձեռնտուէրէն ընէին կաթուղիկեայ կրօնքը ճնչելու <sup>բարեբախտ</sup> և <sup>անոնց կրօնքն</sup> գրգռելու համար՝ լիրք զրպարութեամբ ամբաստանեցին զճեկեղեցին իբր թէ նախանձոտ աչօք տիրապետելու կը ճգնի թագաւորաց իշխանութեանն ու իրաւանցը վրայ, Սակայն այսպիսի ճարտար միջոցներով ապահովութիւն և յանդգնութիւն գտնելով սկսան մեծ ոյժ ստանալ տէրութեանց <sup>իսկ զանոնք</sup> կառավարութեանց հիմունքն խախտելու և պետութեանց զլուխներն հալածելու վատահամբաւելու և արտաքսելու, ամեն անգամ որ անոնք յիշեալ ազանգոյն պահանջածէն տարբեր եղանակաւ իրենց իշխանութիւնը գործածուած ըլլային: <sup>իսկ զանոնք</sup> Անոնքն, եղանակաւ ալ



պատակն այն է որ՝ ընտրելագոյն գիտութեան մը նպատակ՝ մարդկանց մտաւոր հիւանդութիւնքն ըժշկուին, և միանգամայն ալ մտորութեանց տեսակ տեսակ կերպարանաց ու մտլութեանց բազմադիմի հրապուրանաց առջեւը մարդիկ ապաստանարան մը գտնան, մանաւանդ ներկայ ժամանակին մէջ ուր կը տիրէ գրեթէ արձակ համարձակ աղատութիւնը և սորվելու անյազ փափաքը: Յիրաւի մեծ գործ մ'է այս, և որուն մէջ գլխաւորաբար ձեր աշխատանայ մասնակից և ընկեր պիտի ըլլայ կղերք՝ եթէ ձեր ջանքով աղէկ մը հրահանգուած ըլլայ բարեկարգութեան և գիտութեան ասպարէզին մէջ: Սակայն այսպիսի սքանչելի և ամենակարեւոր գործ մը ը կարօտի նաեւ աշխարհական անձանց խոհական աջակցութեանը, որոնց բարեբարութիւնն ու գիտութիւնը կրօնասիրութեան և հայրենասիրութեան հետ կից ըլլան: Ասոնց ալ ոյժն առաջիններուն հետ միացնելով ջանացէք, գիտական եղբարք, որ մարդիկ յիշի կերպով թէ՛ ճանչնան և թէ՛ սիրեն Եկեղեցին. որովհետեւ որչափ աւելի աղէկ ճանչնալու և սիրելու ըլլան դայն մարդիկ՝ այնչափ աւելի պիտի զգուին և հեռանան գաղտագողի ընկերութիւններէն: Վասն սրոյ գիտմամբ այս յարմար առթէն օգուտ քաղելով դարձեալ կը կրկնենք հոս այն բանը, զոր ուրիշ անգամ զրուցած էինք, թէ պէտք է ամենայն եռանդեամբ տարածել ու պաշտպանել Սրբոյն Փրանկիսկոսի Երրորդ Կարգը, որուն կանոնադրութիւնը այս վերջին ժամանակներս խոհական չափաւորութեամբ թեթեցուցինք: Վասն զի այս կարգին նպատակը՝ ինչպէս իւր հիմնադիրը հաստատած է՝ ամբողջապէս յայտն կը կայանայ, կոչել զմարդիկ ի նմանութիւն Յիսուսի Քրիստոսի, սիրել տալ զՅիզեզեցին և գործնական ընել քրիստոնէական առաքինութիւնները, հետեւաբար կրնայ բնադրուող մեծապէս օգտակար ըլլալ այս դարչելի ընկերութեանց տարափոխիկ ախտը ջնջելու համար: Թո՛ղ ուրեմն օրըստօրէ անձամբ ու զարգացմամբ ծաղկի և զօրանայ այս սրբազան եղբայրութիւնը, որմէ բազմաթիւ արգասիք կրնան սպասուիլ, և ի մասնաւորի այն մեծ օգուտը՝ որով մարդիկ պիտի վայելեն ճշմարիտ աղատութեամբ եղբայրութեան և հաւասարութեան պտուղները, չէ՛ թէ Որմնադրաց իմացած այլանդակ եղանակաւ, հապա ինչպէս որ Յիսուս Քրիստոս մարդկային ազգին առատաձեռնեց որուն և սուրբն Փրանկիսկոս հետեւեցաւ: Մեր խօսքն է Որդո՛ւն Աստուծոյ՝ այն աղատութեանը վրայ, որուն շնորհիւր չպիտի ծառայենք ո՛չ սատանային և ո՛չ ալ ցանկութեանց՝ որոնք են չարաչար տեսք, այն եղբայրութեան վրայ՝ որուն ծագումը յԱստուած է, որէ ընդհանուր ստեղծող և հայր ամեն մարդկան, այն հաւասարութեան վրայ՝ որ արդարութեան ու եղբայրսիրութեան հիմանց վրայ հաստատուած ըլլալով՝ չե՛րեւակայե՛ր բնաւ ջնջելու մարդկանց մէջ եղած աստիճանի ամեն տարբերութիւնը, հապա կենաց զանազան հանգամանքներէն ու պարտաւորութիւններէն այն զարմանալի համաձայնութիւնն ու ներդաշնակութիւնը կը յօրինէ, որ բնականապէս օգտակար կ'ըլլայ քաղաքական կենաց շահուցն ու արժանապատուութեանը:

Երրորդ՝ հիներէն իմաստութեամբ հաստատուած հիմնարկութիւն մը՝ կայ, որ ժամանակ անցնելով անպարտաւոր մնացած է. ասիկայ կրնայ ներկայ առնա նմանօրինակ հիմնարկութեանց համար օրինակ և ձև մ'ըլլալ: Մեր խօսքն է արհեստաւորաց այն փորձաքննիչ և ընկերութեանց վրայ, որոնց նպատակն է՝ կրօնքին առաջնորդութեանը ներքեւ՝ աշխատաւորաց նիւթական շահերն ու անոնց բարքը բարւոքել: Եթէ Մեր նախնիք երկայնժամանակեայ կիրառութեամբ ու փորձով այնպիսի ընկերութեանց

մտաւոր  
Քր

օգտակարութիւնը տեսան ու իմացան, Մեր ժամանակն ալ հաւանականաբար ևս առաւել պիտի զգայ զայն, որովհետեւ առանձին պատշաճողութիւն մ'ունին անոնք վերոյիշեալ աղանդոց ոյժը փճացնելու ու ջնջելու համար: Անոնք որ չքաւորութենէն ազատելու ուրիշ միջոց չ'ունին, բայց եթէ իրենց ձեռաց աշխատութիւնը, ո՛չ միայն իրենց գտնուած վիճակին պատճառաւ ամենէն աւելի եղբայրսիրական միջթարութեան արժանի են, այլ նաև ինչու որ ևս առաւել ենթակայ կը գտնուին ստապատիր մարդկանց հրապուրանայն ու խորամանկ խաբէութեանցը զո՛հ ըլլալու: Ուստի պէտք է ըստ կարի օգնութեան հասնիլ անոնց մեծ մարդասիրութեամբ մը, և համեստ ու պատուաւոր ընկերութեանց հրաւիրել զանոնք, որպէսզի չ'ըլլայ թէ չար ընկերութիւններէն շորտացախ հետեւաբար խիստ կը փափաքինք որ հոգւոց փրկութեան համար՝ Եպիսկոպոսաց առաջնորդութեան ու հովանաւորութեանը ներքեւ՝ այսպիսի եղբայրութիւններ վերջտին կաղմուին ներկայ ժամանակին յարմար եղանակաւ: Մեծապէս ուրախ ենք տեսնալով որ՝ արդէն շատ մը տեղուանք սոյնպիսի եղբայրութիւններ կաղմուած են, ինչպէս նաև գործավարաց միաբանութիւններ՝ որոնց բուն նպատակն է ձեռնտու ըլլալ աշխատաւորաց պատուաւոր դասուն, անոնց զաւկներն ու ընտանիքը պաշտպանութեան տակ առնուլ, և հրահանգել կրթել զանոնք բարեպաշտութեան՝ կրօնական սկզբանց ու բարի վարուց մէջ: Այս տեսակ միաբանութեանց մէջէն չենք ուզեր հոս լուրթեամբ անցնիլ այն եղբայրութիւնը, որ յայնաւոր հանդիսացաւ իւր աշխարհահռչակ օրինակաւ և հասարակ ժողովրդեան ալ շատ արդիւնաւոր գտնուեցաւ, այսինքն սրբոյն Վինկենտինոս Պաւլայեանի եղբայրութիւնն որ իւր հոգեւոր հօրմէն ժառանգեց այս անունը: Արդէն ծանօթ է ամենուն իւր գործած օգուտն և գիտած վախճանը, իրեն բոլոր ջանքերն մի միայն այս նպատակին կը գիժեն, որ անձնուիրութեամբ աղքատաց ու թշուառացեղոց օգնութեան հասնի, և զարմանալի հանճարեղութեամբ ու ոչ նուազ հիմնալի հեղութեամբ մը այս բանս կը գործէ. բայց որչափ որ այս եղբայրութիւնս կ'ուղէ ծածկաբար բարիք ընել, այնչափ աւելի լաւ և յարմար եղանակաւ քրիստոնէական եղբայրսիրութիւնը ի գործ կը գնէ, և մարդկանց թշուառութեանցը սփոփանք կը բերէ:


Չորրորդ՝ որպէս զի աւելի դիւրաւ Մեր փափաքանացը կարենանք հասնիլ՝ մասնաւոր կերպով կը յանձնարարենք մանկտին ձեր հաւատոց և հսկողութեանը. ինչու որ մարդկային ընկերութեան յոյսն այն է. Ձեր խնամատարութիւնը գլխաւորապէս անոր կրթութեանը նուիրեցէք. և մի՛ կարծէք թէ որչափ նախահոգ զգուշութիւն ու ճիգ ՚ի գործ զնելու ըլլաք՝ աւելի մեծ ջանից պէտք չ'ըլլայ, որպէս զի արդիւնք մասնակութիւնը յաճախեցն այն գաղտնիներն ու վարձապետները, որոնց քով յիշեալ աղանդոց թունալից ու ապականարար օգրք կը շնչէ: Ծնողքներն, հոգեւոր հայրերն ու ժողովրդապետները առանձին կերպով քրիստոնէական վարձապետութեան հրահանգները աւանդեն տղայոց: Ձեր առաջնորդութեանը ներքեւ ըստ պատշաճի ազդարարութիւնը ըլլուին զաւակաց ու աշակերտաց այսպիսի ընկերութեանց փաստակարարութեանը վրայ, որպէս զի հասկնալով զգուշանալու ջանան այն ներգապատիր ու տեսակ տեսակ հնարքներէն, զորո՞ք անոնց հետեւողերը ՚ի գործ գնելու սովոր են զուրիշներն որսալու նպատակաւ: Մանաւանդ որոնց որ պաշտօնն է ըստ օրինի հրահանգել զմանկտին սուրբ խորհուրդներն ընդունելու համար՝ խոհեմութեամբ գործած կ'ըլլան եթէ

անոնց ամէն մէկը համոզեն հաստատապէս առաջադրել <sup>չափ</sup> բնաւ երբէք ընկերութեան մը մէջ չ'մտնալու առանց իրենց ծնողաց գիտութեան կամ հաւանութեանը, և կամ առանց խորհրդակցելու իրենց ժողովրդապետին կամ խոստովանահօրը հետ :

Սակայն լաւ գիտենք՝ որ Տէրունական անդատանէն այս քրասակար սերմերը խըլելու հանելու համար մեր հասարակաց շանքերն ապարդիւն պիտի մնան, եթէ երկնային այգւոյն Տէրը մարդասիրաբար մեր դիտած նպատակին զօրավիգ չ'ըլլայ : Ուստի հարկ է մեծաւ եռանդեամբ և փութով անոր գործակցութիւնն ու օգնութիւնը խընդրել՝ որչափ որ վտանգին ծանրութիւնը և հարկաւորութեան ստիպողութիւնը կը պահանջեն : Որմնադրական աղանդը իւր յաջողութեանցը վրայ դուռդանալով՝ ժայռութեամբ գլուխը վեր կը վերցնէ, ու իւր յանդգնութիւնը <sup>ալ ոչ կարելի էր իր անբնական թողոր աղանդակիցք ապիրատ հաշնադրութեամբ մը և ծածուկ խորհրդոց կապերովը մէկ մէկու հետ միացած՝ փոփոխակի ձեռնտու կ'ըլլան իրարու, և մէկվմէկ կը գրգռեն յանդգնաբար շարութիւն գործելու : Այսպիսի բուռնյարձակման մը դժգոբեղ պաշտպանութիւն մը հարկաւոր է, այսինքն ամէն բարեսէր մարդիկ մէջէն ն միաբանելու են թէ՛ աղօթելու և թէ՛ գործելու ընդարձակածաւալ եղբայրութիւն՝ իր կազմելու նպատակաւ : Ուստի կը խնդրենք անոնցմէ՝ որ համաշունչ ոգւով վերոյիշեալ աղանդոց օրըստօրէ զարգացմանը դէմ հաստատ կենան : միանգամայն ալ պաղատագին ձեռքերնին առ Աստուած բարձրացնեն, և հայցելով աղաչեն զինքն՝ որպէս զի քրիստոնէական կրօնքը ծաղկի և բարգաւաճի, ձկեղեցին պարտ ու պատշաճ ազատութիւն մը վայելէ, շիտակ ճամբէն դուրս թափառողները յուղղութիւն գառնան, մոլորութիւնք տեղի տան վերջապէս ճշմարտութեան և մոլութիւնք առաքինութեան : Մեզի օգնական և բարեխօս ունենանք զսուրբ կոյան ՄԱՐԻԱՄ Մայրն Աստուծոյ, որպէս զի ինչպէս ինքն իւր յղութեան առաջին վայրկենէն յաղթող հանդիսացաւ սատանային, այնպէս նաև իւր զօրութիւնը ցուցընէ այս ամբարիշտ աղանդոց դէմ՝ որոնք յայտնապէս վերակենդանացնել կ'ուզեն չար սատանային ապստամբութեան ոգին և իւր անսանձ նենդութիւնն ու խարդախութիւնը : Մեր օգնութեանը կոչենք նաեւ երկնային զօրաց իշխանը՝ ՄԻՔԱՅԷԼ Հրեշտակապետն, որ ապստամբ հոգիները դժոխքին մէջ գահավիժեց : նոյնպէս ալ զսուրբն ՅՈՎԱԷՓ Ամենասուրբ կուսին փեսայն և կաթողիկէ Եկեղեցւոյն երկնային զօրաւոր պաշտպանը, դարձեալ զգլխաւոր Առաքեալն ՊԵՏՐՈՍ և ՊՕՂՈՍ, որոնք կաթողիկէայ հաւատոց սերմանացաններն ու անպարտելի ախոյաններն են : Ասոնց ամենուն պաշտպանութեամբը և բոլոր հաւատացելոց աղօթից յարատեւ օժանդակութեամբը վստահ ենք որ պիտի բարեհաճի Աստուած յարմար եղանակաւ օգնութեան հանելու մարդկային ազգին, որն որ այնչափ վտանգներու մէջ կը գտնուի :</sup>

Իսկ ի գրաւական երկնային պարգեւաց և ի նշանակ բարեհաճութեան Մերոյ՝ լի ուրի սիրով կը շնորհենք ի Տէր Առաքելական Յրհնութիւնը ձեզի, Պատուական Եղբարք, և ձեր ինամոնց յանձնուած կղերին և ժողովրդեան :

Տուեալ ՚ի Հռովմայի սուրբոյն Պետրոսի, ՚ի 20 Ապրիլի 1884, մեր քահանայապետութեան եօթներորդ սուրբօրհնութեան 90-րդ տարին : ԼԵՒՈՆ ԲՍ.ՀԱՆԱՅԱՊԵՏ ԺԳ.



Յար և Երանելի թարգմանութիւնը ընդ Լատին բնագրին՝ որ պահի ՚ի կաթողիկոսական Դիւանի մերում :

՚ի կաթողիկոսարանի մերում՝ որ ՚ի Բերա Կ. Պօլսի  
Ստեփանոս Պետրոս Ժ.  
Կաթողիկոս-Պատրիարք Կիլիկիոյ  
ի 28 Յունիսի 1884 :

3406

<< Ազգային գրադարան



NL0030470

3293